

Հ. ՓԱՓԱՉՅԱՆ

ՍԵԺՅԱՆ ԻՐԱՆԻ ԱՄԻՄԻԼՅԱՏՈՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶԸ¹

Ծանր է եղել հայ ժողովրդի վիճակը 16—18-րդ դարերի պարսից տիրապետության շրջանում։ Հայ աշխատավորությունը ոչ միայն ենթարկվում էր տնտեսական և սոցիոլական ահամուր ճնշման ու հարստահարման, այլև նրա նկատմամբ կիրառվում էր դաման աղդային և կրօնական հաւածանքների հետևողական քաղաքականություն։

Այդ հալածանքների գլխավոր նպատակն էր բռնի կերպով հավատափոխ անել, ձուլել և ի վերջո մերժնականապես ասխմիլյացիայի ենթարկել բոլոր աղդային փոքրամասնություններին և հատկապես քրիստոնյա ու այլազգական ժողովուրդներին։

Հայոնի է, որ հայերի, վրացիների և մյուս այլազգան ժողովուրդների ասխմիլյացիան 16—18-րդ դարերում տեղի էր ունենում հավատափոխության եղանակով, և դա միանգամայն հասկանալի էր։ Ֆեոդալական հասարակարգում, ինչպես այդ մասին դրում է էնդելսը, «Էկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշրջի խոսքերն ամեն մի գատարանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արգեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածարանության խնամակալության տակ։ Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածարանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարդի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»²։

Հասկանալի է, որ էնդելսի այս դրույթը հավասարապես վերաբերում է նաև իսլամական աշխարհին, որտեղ պետական-քաղաքական վարքագիծը խստորեն ենթարկվում էր Ղուրանի դոգմաներին և շարիաթի օրենքներին։ Սեփյան Իրանում կրօնական անհանգույքողականության ձևով արտահայտվող ասխմիլյացիայի քաղաքականությունը վարվում էր շիհզմի դրոշի տակ, որի գլխավոր ողերնչողները շիա բարձրաստիճան հոգեորականներ էին։

Պատմիչներ Առաքել Դավթիթեցու, Զաքարիա Սարկավագի, Գրիգոր Դարանաղցու և ուրիշների երկերում բազմաթիվ հիշատակություններ կան բռնի հավատափոխության և այդ պատճառով տեղի ունեցած նահատակության վաստերի մասին։ Հանուն հավատի կատարվող նահատակության

¹ Զեկուցված է Մատենադարանի VII գիտական ակադեմիային, 1954 թ. դեկտեմբերի 29-ին։

² Ֆ. Էնդելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46։

բազմաթիվ այլ փաստեր ցըմած են նաև այլ և այլ ձեռագիր մատյանների հիշատակարաններում, «Յայսմաւուրքներում» և այլուր. Սակայն չնորհիվ այն բանի, որ բոնի ասիմիլյացիայի քաղաքականությունը վերսիշյալ պատմական երկերում իր արտացոլումն է դաեւ սոսկ առանձին անհատների նկատմամբ գործադրվող բանության և դրա հետևանքով առաջացած նահատակության փաստերի արձանագրության միջոցով, այդ աղբյուրների տվյալներով հնարավոր չէ լրիվ և ճշգրիտ պատկերացում կազմել մեր ժողովրդի ոչ-հեռավոր անցյալի պատմության կարեւոր հարցերից մեկի մասին:

Բանն այն է, որ բոնի հավատափոխության նման հարկադրական ձեր, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ նահատակության փաստերը, այնքան էլ ցանկալի արդյունք չեր տալիս, այլ ընդհակառակը՝ սովորաբար վերջանալով դիմագրող անձնավորության սպանությամբ, դառնում էր քրիստոնեության պրոպագանդայի մինոր նոր նորակ: Թեև պետք է նշել, որ հայ պատմիչների ու ժամանակադիրների կողմից ավելի շատ արձանագրված երնդգրծված են հատկապես այն դեպքերը, երբ հավատափոխության հարկադրանքը առիթ է տվել նոր վկայության, բայց և այնպես, հենց նույն սկզբանապրյուրներում քիչ չեն նաև հիշատակություններ տարրեր ժամանակներում մահմելականություն ընդունած հայերի մասին:

Սեփյան տիրապետության շրջանում, իրանական կառավարող շրջանների սոսիմիլյատորական քաղաքականության ուսումնասիրության համար շատ ավելի կոնկրետ և հարուստ նյութ են պարունակում Սատենագարանի սպարուկերեն բազմաթիվ վավերագրերը, հատկապես մուսուլմանական շարիաթական փաստաթղթերն ու զանազան վեճերի կապակցությամբ հրապարակված «Փեթվաները» («*فتوحات*»):

«Ֆեթվա» բառացի նշանակում է «վճիռ», «որոշում»: Ֆեթվաներ աբրվում էին ինչպես կենտրոնական «Դիվան-ալ-սազարաթի» (մայրաքաղաք կրօնական ատյանի), այնպես նաև տեղական (Թավրիզի, Նախիջևանի, Երևանի) «Շար'ի» ատյանների կողմից այն դեպքերում, երբ քաղաքացիական կամ «Ռուբի» դատարաններում նստող հաքիմները գժվարանում էին որևէ հարց վճռել և դիմում էին մուֆթիին կամ շեյխ-ուլ-խումբին, իսկ վերջիններս ելնելով մուսուլմանական շարիաթական ոկզբունքներից, տալիս էին իրենց վճիռը, որը շահի կողմից վավերացվելուց և համապատասխան մատյաններում արձանագրվելուց ու կնքվելուց հետո՝ օրենքի ուժ էր ստանում:

Մատենագարանի Արխիվային բաժնում պահվող 50-ի չորրորդ ֆեթվաները հիմնականում վերաբերում են «զիմմի» ուստաթների (հայեր) քաղաքացիական իրավունքների, ջիզյայի վճարման որոշ մանրամասնությունների և հատկապես հայոց եկեղեցու իրավասությունների ճշտման հարցերին և չափազանց կարեւոր են հայ ժողովրդի ոսցիալ-իրավական վիճակի ուսումնասիրության տեսակետից: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հատկապես 17-րդ դարի այն ֆեթվաները, որոնք վերաբերում են ժառանգության հարցերին և որոնց մեջ չափազանց պարզորոշ կերպով իրենց իրավական ձևակերպումն են դաեւ իրանական կառավարող շրջանների և հատկապես տեղական դատական օրգանների սոսիմիլյատորական ձգտումներն ու նպատակները:

Համաձայն շարիաթական օրենքի՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, որոնք վճարում էին հատուկ պիտահարկ, կամ չիղյա-

իրավունք ունեին ազատորեն իրենց կրոնը գավառնելու։ Այդովիսի ժողովուրդներն ու համայնքները կոչվում էին «ջիզյե գողար» — | Հ Ջ Հ | («ջիզյա հատուցող»), կամ շղիմմիշ («պարատապան») ժողովուրդներ կամ համայնքներ։ Հատուցողը 16—18-րդ դարերում հրապարակված դերադուչն «Դիվան-ալ-ազարաթի» ինչպես նաև շեյխուլ-իուլամների ու մուֆթիների ֆեթվաներում, որոնք ինչպես նաև շեյխուլ-իուլամների մուֆթին առաջարկում էին ժամանակի շահերի կողմից արված ֆերմանին, բազմիցու շեշտված է, որ շեյխուլ-իուլամները կերպով ջիզյա հատուցող հաներով, ոչ ոք իրավունք չունի ստիլերու, որ քրիստոնեական հավատքը թողնեն և մահմեդականություն ընդունեն»¹։

Հայ ուսյաթներից գանձիսղ դիխահարելի և տարիների ընթացքում նրա վրա բարդվագ վերադիր դումարներն ու տոկոսները («թափավութ» և «փար» — تفاقت و فرج) բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում սկսության ֆինանսների մեջ։ Շատ հաճախ որոշ դյուզերից ստացվող գլխահարելը կազմում էր նույն գյուղից գանձիսղ հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին։

Առաջին իսկ հայացքից թվում է, թե գլխահարելի ծանրությունը ինք նիս պիտի պատճառ գառնար մեծ թվով, հատկապես չքովոր հայերի, հաւագատափոխության, սակայն պետք է ասել, որ հայ աշխատավոր ժողովուրդը նյութական խոշոր զոհողությունների գնով, ամենուրեք, համառորեն դիմութամադրում էր և հաստատակամորեն մերժում բազմիցու կատարվող հավատափոխության առաջարկները։ Հայտնի է, որ 17-րդ դարում կոտորածի սպառնալիքի տակ մասնական հավատավոխության գեղօքեր տեղի ունեցան իրանի խորքերը քշված հայ գաղթականության խիստ մեկուսացած մի քանի թեկունների հետ հատկապես ֆարսի և Մաղանդարանի նահանգներում, իսկ հայ ժողովրդի հիմնական մասսան, ինչպես մայր հայրենիքում, այնպիս նաև Սպահանում և Նոր Զուղայում, վճարելով ջիզյան՝ վճռականորեն սրայքարում էր ասիմիլյացիայի փորձերի գիմ։

Պարզ է ուրեմն, որ այս դիսլքում, երբ համաձայն գոյություն ունեցող շարիաթական օրենքների, հայերը ծանր հարկատվության գնով շարու նակում էին պահպաննել իրենց հավատքը։ Հայ աշխատավորության բռնի ասիմիլյացիայի գործը հաջողությամբ չէր կարող պահպել։ Մի կողմ թողած դեռ այն փաստը, որ հայ ազգաբնակչության ասիմիլյացիան օրյեկտիվորեն չէր բխում պետության շահերից, որովհետեւ այդովեսով պետությունը զրկվում էր բավական շոշափելի եկամուտի աղբյուրից։ Սակայն շնորհիվ այն բանի, որ պետության օրենսդրական ֆունկցիաները գտնվում էին այդ հարցում անմիջապես շահագրգությած մուսուլման բարձրառության հոգերականության ձեռքում, վերջիններիս հաջողվում էր իրենց կողմից հրապարակվող ֆեթվաներով անցկացնել մի շարք օրենսդրական միջոցառումներ և հայ ազգաբնակչության որոշ խավի մեջ զգալի հունձ կատարել, կանգնեցնելով նրանց հավատափոխության ուղու վրա։

Շիաների մոտ վաղուց գոյություն ուներ, այսպես կոչված Իմամ-Զահֆարի օրենքը, ըստ որի զիմմի ույաթների մուսուլման դարձած աղականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա աղգականների ունեց-

¹ Մատենադարանի պարսկերեն վավերագրեր (ՄՊՎ.) թղթապանակ 1ր, վագ. № 132ա, 132բ, 132դ, 145 և այլն։

գածքը ամբողջապես գրավելու և նրանց իսպառ զրկելու ժառանդության իրավունքից:

16—18-րդ դդ. մեղ հասած բազմաթիվ կալվածագրերում հանդես եկող օտարող կամ գնող կողմերի անվան հիշատակմանը հաճախ նախորդում է շնոր մահմեղական» («Ճաղիդ-ուլ-իսլամ»—ըշալայ Հայ) տերմինը, որից երեւում է, որ տվյալ անձնավորությունը նոր է մահմեղականություն ընդունել: Այդ պարզ երեսում է հատկապիս այն վավերագրերից, որոնց մեջ նոր մահմեղականություն բնուանած կողմը ժառանգական վեճերով հանդես է գալիս իր այն հարազատների գեմ, որոնք գետես պահպանում են քրիստոնեական համատր:

Այս առթիվ տրված բազմաթիվ բողոքագրերի և դատական պրոցեսների բավական ստվար գործեր կան պահպանված: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ, մասնակի բացառություններով, ժառանգության խնդրում միշտ էլ առաջնությունը արգում էր մահմեղականություն ընդունած ժառանգներին: Բնորոշ է, որ կենարոնական Դիվանալ-սադարաթի կողմից տրված ֆեթվաներում, որոնք առանց բացառության բոլորն էլ հաստատված են շահական ֆեթվաններով, այդ առաջնության հարցը այնքան էլ սուր կերպով չի դրված: Մանավանդ, որ պահպանված վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են ոչ անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերին: Այսինչ, Երևանի, Նախիջևանի և այլ վայրերի շարիաթական ասյանների ֆեթվաններում, որոնց մեջ քննարկված են նաև անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերը, մուսուլման ժառանգներին տրվող առաջնության մոմենտը առանձնապես շեշտված է:

16—17-րդ դդ. հայկական աղբյուրներում ևս կան որոշակի վկայություններ այն մասին, որ շատ հաճախ որևէ մահմեղական դիմում էր Շար'ին և մի քանի կեղծ վկաններով «ապացուցում», որ ինքը այսինչ հայի աղքականն է և այդպիսով զավթում նրա ամբողջ ունեցվածքը, կամ նրա մի մասը: Այսպես, օրինակ, Զաքարիա սարկավագը իր «Պատմագրության» Ա. հատորի 42-րդ գլուխում պատմում է, թե ինչպես քանաքեռցի ոճն Միքայել եպիսկոպոսի գեմ մի պարսիկ վեճ է սկսում և դիմելով Շար'ին պընդում է, որ ինքը աղքական է նրան, ուստի պետք է նրա հարստությունը վերցվի նրանից և տրվի իրեն:

Սկզբում Երևանի Շեյխ-ուլ-իսլամը բավարար ապացույցներ չդտնելով մերժում է նրա պահանջը և բազմաթիվ վկանների ստորագրությամբ կազմում է մի արձանագրություն, որով հերքվում է նրանց աղղոտկցությունը: Սակայն հետո պարսիկին հաջողվում է կաշառել Շեյխ-ուլ-իսլամին, որը երկրորդ գրությամբ իրավունք է տալիս նրան սեփականացնել Միքայել եպիսկոպոսի այգին: Իսկ երբ վերջինս նորից բողոքում է շեյխին, նա պատասխանում է, թե չես ոչ էի ճշմարտութեամբ վերահասու եղեալ իրացն և այժմ հաւաստիաւ ծանեալ, զի աղքական քո է նա, և ըստ օրինաց մերոց զամենայն ինչքն քո նմա պատկանիւ¹:

Թեև ի վերջո Միքայել եպիսկոպոսը Կոտայքի մելիք Դավութի միջոցով կարողանում է իր բողոքը տեղ հասցնել և Երևանի Թահմազկուլի խանը անդեկանալով այն մասին, որ Շեյխը կաշառը է վերցրել ու փոխել իր վճիռը,

¹ Զաքարիա Սարկավագ, հ. Ա. էջ 73:

հրամայում է հետացնել նրան այդ պաշտոնից և խայտառակել հասարակության տառջ, սուլայն կառակածից զուրո է, որ ազգակցությունը ապացուցվելու դեպքում օրենքը իրավուք էր տալիս վերցնելու զիմմի ույաթի ունեցվածքը և ամբողջությամբ տալու նրա մահմեկական ազգականին։ Ծեյխուլիմամբ պատճենամ է ոչ թե նրա համար, որ այդպիսի որոշում էր ընդունել այլ նրա համար, որ կեղծել էր իրականությունը, և օտար մարդուն հայտարարել որպես հիշյալ եպիսկոպոսի ազգականը։

Մահմեդականություն ընդունող հայերի ժոանդական իրավունքները ամբարնդելու տեսակեալից չտփազանց հատկանշական է 17-րդ դարի 20-ական թվականներին, համանաբար Երևանի Շար'ի կողմից հրապարակված ֆեթվան, որտեղ չորս առանձին հարցումների՝ Շար'ը որոշակի պատասխաններ է տալիս։ Ծանոթանանք այդ հարցերի և նրանց պատասխանների հետ։

Առաջին հարց «Իմաստուն կրօնականերն ու շիա դավանանքի գիտունները, — որոնց խոսքը թող համբայանս ապրի աշխարհում, — ի՞նչ են հրամայում հետեյալ հարցի մասին։ Եթե Մեհդիկուլի անունով նոր մուսուլման զարձած մեկը մահանա և ունենա մեկ որդի Շահնազար անունով նույնականությունն, ինչպես նաև Զաքարիա անունով մուսուլման որդուց երկու թոռներ՝ Մարիամ և Ֆաթմա անուններով, այս գենգրում հենց վելով այն սկզբունքի վրա, որ սրուոր մերձավորները արգելում են հեռագիրներին, հիշյալ Մեհդիկուլիի թողած ժառանգությունը, անհրաժեշտ բռոր մասնանումները կատարելուց հետո, արդյոք ամբողջությամբ պատկանում է վերօնիշյալ Շահնազարին, թե ոչ Պարզեցեք»։

Ծեյխուլիմամբ պատասխանում է՝ «Այս, պատկանում է Շահնազարին» և կնքում։

Երկրորդ հարց «Իմաստուն մարդիկ, — որոնց խոսքը թող համբայանս ապրի ազնիվ մարդկանց շրջանում, — նմանապես թող հայոննեն իրենց խոսքը հետեյալ հարցի մասին։ Եթե Բարտ անունով մի զիմմի վախճանվի և ունենա երկու մուսուլման եղբոր որդիներ և մի անհավատ եղբայր և եղբոր որդիներ, այս գենգրում անհավատները զրկվում են զիմմիի ժառանգությունից, թե ոչ Պարզեցեք»։

Ծեյխուլիմամբ պատասխանում է՝ «Այս, երբ կա մուսուլման ժառանգ, անհավատը ժառանգությունից զրկվում է» (կնիք)։

Երրորդ հարց «Եռույնական թող հայոննեն իրենց խոսքը հետեյալ հարցի մասին. Եթե նախ քան հիշյալ զիմմիի ժառանգությունը նրա մուսուլման եղբոր որդիների միջև բաժանվելը, վերոհիշյալ զիմմի եղբայրը, որը նախապես զիմմի էր, մուսուլման դառնա և քանի որ որպես ժառանգորդ նա ավելի մերձավոր է քան մյուս եղբոր որդիները, այս գենգրում արդյոք եղբոր որդիները զրկվում են ժառանգությունից և ժառանգությունը ամբողջապես պատկանում է միակ եղբորը, թե ոչ Պարզեցեք»։

Ծեյխուլիմամբ պատասխանում է՝ «Այս, այդպես է լինում և ժառանգությունը պատկանում է ամենամերձավոր ժառանգորդին» (կնիք)։

Չորրորդ հարց «Եռույնական թող հայոննեն իրենց խոսքը հետեյալ հարցի մասին. Եթե երրեք հիշյալ եղբայրը, որ իր զիմմի եղբոր միակ ժառանգորդն է, վախճանվի և ունենա մեկ որդի, որը վերոհիշյալ Շահնազարն է, և հիշյալ թոռները, և այս գենգրում, երբ Շահնազարը, որ այսպիսով միակ ժառանգորդն էր դարձել և իրավունք ուներ ամբողջ ժառանգությունը

جسے فریاد علماء امامہ رضاؑ انی ستر ایک روز اور

ابن علیؑ کو هر کام میں اعلیٰ حرمہ الاسلام نوٹ تھا اور سو بڑے شاپنگ

تھے فریاد کان پریز بھی تیر دفاتر شان ذکر یا ان میں تھیں۔ بعد ازاں

بھائی کی افسوس میں لاصد نظر اخواہ سایہ احمد بن ابراهیم کا

رزکات چھوٹی ٹھیک ایسا تھا جس نے انصافی عوائد ہے بازی کو ادا

کیا۔ فریاد کان پریز بھی اسی کی وجہ سے ایسا تھا کہ

ایضاً بیان فریاد علماء امام ایوبؑ افادہ فرمی ان کرام عربیان تھے کہ

کو ہر چاہیہ بنا دینی فوتوں کو از سو رواد را دے سکاں دیں لہاڑ

ویسے کاریں و ملکاں صد کار مجموع از یوت دنی نہیا دہنی اور

ایضاً بیان فریاد در بیان ائمہ کو چکا، برادر فریاد کان اسلامی قبیل اک

ارت دنی و دلک، در بیاد بکیر فریاد فریاد فریاد فریاد فریاد فریاد فریاد

17-رث q. 20-اکیاں بیکاریاں نہ کریں ہر کیاں ہی ڈیکھا تو یہ ہیں لامبی ہی
نہ رکھا اور رکھا اسے ڈیکھو، بیکاریاں ہی میں کوئی ڈیکھا تو یہ ہیں لامبی
میں کوئی ڈیکھا نہ کریں ہر کیاں ہی میں کوئی ڈیکھو اسے ڈیکھو اسے ڈیکھو

զերցնելու, վերոհիշյալ դիմմի որդին ևս մուսուլման դառնա և այդպիսով ինքը դառնա միակ ժուանգորդը, եղբայրներից ավագը լինելով հանդերձ, ավելի ուշ մուսուլման դարձածը կարող է ավելի վաղ մուսուլման դարձած եղբորից խել ժառանգության իրավունքը, թե ոչ: Պարզեցեք¹:

Ենթառութիւրամը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և կնքում

Այսպիսով ստացվում է հետեւյալ պատկերը: Վախճանվել է Բարա անուշ, նով մի հայ: Սերունդներ չունենալու պատճառով նրա ունեցվածքը ժառանգում են եղբայրները: Բարան ունեցել է երկու եղբայր, որոնցից մեկը մահմեդականություն էր ընդունել և վախճանվել էր թաղնելով երկու որդիներ, իսկ մյուս եղբայրը, որը նույնական երկու որդիներ ուներ, շարունակում էր մնալ քրիստոնյա: Շայց որովհետեւ այս գեղքում, համաձայն Շար'ի ֆեթվայի ժառագությունը հասնում էր մուսուլման եղբոր որդիներին և ոչ թե դիմմի եղբոր, ուստի վերջինս շտապում է մահմեդականություն ընդունել, որից հետո, որպես ավելի մերձավոր ժառանգորդ իրավունքը է ստանում ժառանգելու եղբոր ունեցվածքը:

Պարզվում է ուրեմն, որ դիմմի ժառանգորդները, որքան էլ որ նրանք մերձավոր լինեին, զրկվում էին ժառանգությունից, եթե կային մուսուլման ժառանգորդներ: Իսկ այս վերջիններս որքան էլ որ նրանք տղակցությամբ ավելի հեռու լինեին, այնուհանդերձ ժառանգության իրավունքը նրանց էր վերապահվում:

Այնուհետև մենք տեսնում ենք, որ նոր մահմեդականություն ընդունած եղբայրը, որ սկսում է անվանվել Մեհդիկուլի, նախքան մահմեդականություն ընդունելը արդեն ուներ երկու որդի՝ Շահնազար և Զաքարիա անուններով, որոնցից Զաքարիան, որը եղբայրներից ավագն էր, դիմմի էր մնացել, իսկ Շահնազարը նույնական մահմեդականություն էր ընդունել: Դրա համար էլ համաձայն ֆեթվայի, իր հոր՝ Մեհդիկուլիի ունեցվածքը, որն իր հերթին ժառանգել էր իր եղբայր Բարայից, նրա մահմանից հետո ամբողջությամբ անցնում է իր փոքր որդուն Շահնազարին, իսկ մեծ որդին դիմմի լինելու պատճառով զրկվում է ժառանգության իրավունքից և հետագայում մահմեդականություն ընդունելով էլ նույնիսկ չէր կարող վերականգնել իր ժառանգական իրավունքները:

Ինչպես ակնանք, հավատափոխությունը ավելի հետափորդներին հնարավորություն էր տալիս ավելի մերձավոր ժառանգների ձեռքից խելելու բալոր իրավունքները և նրանց լիովին զրկելու ժառանգությունից: Շար'ի ֆեթվաներում բավական պարզ ասված է, որ չեթե կամուսուլման ժառանգ, անհավատները ժառանգությունից զրկվում են:

Շար'ը միաժամանակ հնարավորություն էր տալիս դիմմի ժառանգներին անմիջապես մահմեդականություն ընդունելով վերականգնել իրենց իրավունքները: Սակայն այդ պետք է կատարվեր նախքան ամբողջ ժառանգության մուսուլման ժառանգների միջի բաժանվելը: Այլազես, ինչպես առված է ֆեթվայում, ժառանգության իրավունքը պատկանում էր ավելի վաղ մահմեդականություն ընդունողին:

Միանգամայն հասկանալի է, որ ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատափոխության դեսպերը առանձնապես շատ էին քաղաքարնակ

¹ ՄՊՎ, թղթ. 1ա, վագ. № 44:

ունեոր դասի շրջանում: Այդ պարզ երևում է կալվածագրերի մեջ մասից, որպա՞ք բոլորն էլ հիմնականում վերաբերում են խոջաներին, արհեստավոր-ներին, առևտրականներին և այլն: Հանգուցյալի թողած ժառանգությունը իրոք պետք է բավական շոշափելի լիներ, որպեսզի դրդեր նրա ժառանգներից մեկն ու մեկին հավատափոխության միջոցով դիմացինի ձեռքից խլելու ժառանգության իրավունքը:

Այսպես օրինակ, որոշակի վիայություն կա այն մասին, որ երեանցի մեծանարուստ խոջա-Սեթի որդի խոջա-Հակոբջանի սերունդները 17-րդ դարի վերջերին արգեն մահմեդականություն էին ընդունել¹: Որքան էլ որ տարօրինակ լինի, «ջադիդ-ուլ-խալամների» մեջ կային նաև նախկին հայ հոգեսրականներ:

Բանի տսիմիլյացիայի նման երեսոյթների դեմ հայոց եկեղեցին մղում էր համառ և տեսական պայքար: 17—18-րդ դդ. օլոհպանվել են բազմաթիվ խնդրագրեր, դրված ժամանակի կաթողիկոսների կողմից, որոնց մեջ բողոք է հայտնվում այն մասին, որ վերոհիշյալ օրենքների հիման վրա, շատ հայեր, որոնք հեռավոր ազգակցական կապեր ունեն տարիներ առաջ վախճանված մեկի ժառանգների հետ, մահմեդականություն են ընդունում և դիմում են Շար'ին պահանջելով, որ այդ ժառանգների ձեռքից վերցվի նրանց ունեցվածքը ու արգի իրենց: Խնդրագրերում բազմիցս շեշտված է, որ հայերը ընդունված կարգով ջիզյա են վճարում և կատարում են մյուս հարկացին պարտավորությունները, սակայն տեղական շարիաթական օրգանների կողմից շարունակարար խրախուսվում են նման միտումնավոր հավատափոխության երեսոյթները և հրահրվում ժառանգական վեճեր:

Այս գանգատներին սովորաբար շահը պատասխանում էր չափազանց ստանդարտ ֆերմաններով, որոնց մեջ հրահրանդվում էր տեղական խաներին ու բեդլարբեդերին վերահսու լինել և հետեւ, որ շարիաթական օրենքներին հակառակ անարդարացի որոշումներ չընդունվեն:

Բնորոշ է, որ հայ սայաթների սոցիալ-իրավական վիճակի և հայոց եկեղեցու իրավունքների հարցի շուրջը հրապարակված ֆեթվաներն ու ֆերմանները գլխավորապես վերաբերում են 17-րդ դարի 60-ական թվականներին: Հակոբ կաթողիկոս Զուզայեցուն էր վիճակված վճռական պայքար մղել օրբոտօրի սաստկացող ասիմիլյացիայի բացահայտ տեսնենցների և հատկապես էջմիածնի հարստահարման և նրա իրավունքների սուհմանափակման քաղաքականության դեմ, որ մերկապարտնոց կերպով գըր-սկորվում էր հատկապես Սաֆիիկուլի խանի բեդլարբեդության շրջանում (1666—1674 թթ.):

Հակոբ Զուզայեցին այդ թվականներին հարկադրված է եղել Դիվան-ալ-սադարաթից պահանջելու նորանոր ֆեթվաներ, որոնց մեջ խոսվում էր հայկական համայնքին հնուց անտի շնորհված այնպիսի իրավունքների մասին, ինչպիսիք էին՝ օրինակ՝ հայկական ծեսերով ամուսնության, թաղման և այլ արարողությունների ազատությունները:

1669 թվականին մայրաքաղաքի Դիվան-ալ-սադարաթից ստացված մի ֆեթվայում կարդում ենք. «Իսլամի հարգարժան և իմաստուն գիտունները, որոնց խոսքը թող շարունակի իշխան մինչև գտաստանի օրը, ինչ-

¹ ՄՊԳ, թղթ. 1ա, գալ. № 82:

Են հրամայում հետեւալ հարցի մասին, ևթե հայ ժողովրդի որոշակի համայնքներ, ինչպես նաև եպիսկոպոսներ, ուստիութիւններ և ուրիշներ, որոնք բնակվում են Չուխուր-սատագի, Ուչքիլիս (Էջմիածին) կոչվող վանքում, Շատիկ անունով հայտնի անտառում և թուժան-և նախջեանի Եղեգիսի ձորում գտնվող Կարմիր վանքում և այլուր, ինչպես նաև Տաթեկի և Վաղարիկի վանքերում, Դարբարան գյուղում, որ հայտնի է Աղվերծ անունով, և Հարիանաթի այլ վայրերում, զիմմի լինելով շարունակեն զիմմիների կարգով ապրել և համաձայն շարիաթական օրենքի կատարեն ջիզյայի պարագարությունը ու նրան հակառակ որևէ գործ չկատարեն և ուզեն ըստ քրիստոնեական հավատքի իրենց ննջեցյալներին թագել, ամուսնության ակտեր կատարել, կոչնակ զարկել աղոթել և աղոթքի ժամանակ բարձրաձայն երգել, այս գեղքում որևէ մուսուլման իրավունք ունի հակառակ լուսավոր Շար'ի՝ հիշյալ համայնքին նեղություն պատճառել, արգելք հանգիստանալ և չթողնել; որ նրանք վերոհիշյալ ձևով իրենց կենցաղը վարեն, թե ոչ: Պարզեցեք¹:

Սադրը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և հաստատում է, որ ջիզյա վճարող հայերը այդ իրավունքները ունեն:

Թե հայուրնակ որոշ վայրերում ինչ աստիճանի են հասել կրոնական հալածանքները, այդ կարելի է եղրակացնել այն փաստից, որ եղել են գեղքեր, երբ հայերին թույլ չեն տվել իրենց «հայրենի» կարմածներում աղոտորեն վարուցանքով զրադիլել: 1658 թվականին հրապարակված ֆեթվայից հայտնի է գառնում, որ հարկ է եղել հարցում կատարելու բարձրագույն Դիվան-ալ-սադարաթին, թե՝ «երբ արդեն շարիաթական ձևակերպմամբ որևէ կալված որպես մուլք վերջնականապես պատկանում է որևէ հայի, համաձայն շարիաթի՝ այդ հային թույլատրովնել է արդյոք այդ կալվածքը մշակելու, թե ոչ»:

Սադրը այս հարցին զրական պատասխան է տվել և կնքել²: Այս փաստը ինքնին ապացուցում է, որ շատ գեղքերում մուլքային սեփականության իրավունքի հարցում հայերի նկատմամբ լորջ դժվարություններ են հարուցվել:

Ֆեթվաներից երեսում է, որ խիստ ապրածված երեսոյթ է եղել նույնայն, որ երբ հայ սայտթներից որևէ մեկը տռեարական կամ այլ նոլատակներում մի տեղից մի այլ եր գնում, այնտեղ նրանից պահանջում էին կըկին անգամ զլխանարկ վճարել, հակառակ զեղքում ստիպում էին հավատափոխ լինել: Այդ անշուշտ մեծ մասամբ տեղի էր ունենում հայ վաճառականների հետ, որոնցից այս եղանակով փորձում էին խոշոր գումարներ շռըթել³:

17-րդ դարի 60-ական թվականների Դիվան-ալ-սադարաթի մի շարք ֆեթվաներում Հակոբ կաթողիկոս Զուղայեցին հարկադրված է եղել շեշտել տակ, որ շնորհածած գոյություն ունեցող օրենքների, հայ սայտթները ջիզյան վճարում են միայն իրենց հիմնական բնակության վայրում, մեկ անգամ, և այլ վայրերում ճամփորդելիո նրանցից ջիզյա չի պահանջվում: Սակայն չնայած դրան, նույն ֆեթվաների բովանդակությունից սրարդվում

¹ ՄՊՎ, թղթ. 1ր., վագ. № 144, հմմա. թղթ. 1ր., վագ. № 145:

² ՄՊՎ, թղթ. 1ր., վագ. № 107:

³ ՄՊՎ, թղթ. 1ր., վագ. №№ 132ա, 132բ, 132զ, 146 և այլն:



حکیم کنجه سرگردان کوئی دی پاپ دم دن کام سرگردان
 پیغام نهان میگردید که هنوز نهان نهان نهاد
 این دو روز که هنوز نهان نهاد کشیده بودند همچنان که
 حرب خواسته بودند و میخواستند خود را نهادند
 در کارهای خوبی خود را نهادند و میخواستند خود را نهادند
 ملکه بیان

نام این عده فیض
 میخواستند خود را نهادند
 مسماه در میانه عده
 از این طبقه میخواستند خود را نهادند
 ملکه بیان

علی اسلام و هندا و کام و مسماه خدمت خد
 فیض
 لادم الشام مینه بند که کام چاهست خلیمه سرگردان
 سکن در ایام کتابه و میر جلد و سعد نایاب میخواستند
 و غنی در راه را کسر میخواستند و دیگر خاطه را کشیدند
 میر ب افریس و میخواستند در دیگر شش زمانه
 مسماه ایام مینه بند و این قدر همینه بند مادر سیفع از مردم ایام
 خدافت را میخواستند و دیگر از ایام ایشان میخواستند
 مسماه کشیدند میخواستند و دیگر از ایام ایشان
 مسماه کشیدند میخواستند و دیگر از ایام ایشان

1669 ب. հրապարակված Շահ-Սուլեյմանի հրա-
 պարտակն ու Դիվան-ալ-Սագարաթի ֆեթվան
 ջիղյո վճարող հայերին քրիստոնեական կար-
 դութ ամուսնությունն թաղում և այլ ծեսեր
 ու եկեղեցական արարողություններ թույլա-
 տրելու մասին:

է, որ հեռավոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպված են եղել տակերես հավատափախ լինել և վերադասնալով իրենց բնակավայրը վերստին մկրտվել, որն իր հերթին տեղի է տվել նոր հետապնդումների տեղի մուռաւումն բարձրաստիճան հոգեորականության կողմից¹:

Ինչպես զժվար չէ նկատել մեջբերված մի քանի փաստերից, կրոնական անհանգույրժագականության և բռնի տօխմիլլացիայի քաղաքականությունը անմիջականորեն անդրադառնում էր հայ ույաթների անտեսական կյանքին և շոշափում հրանց համար կենսական նշանակություն ունեցող անտեսական խնդիրներ:

Վերը մենք առիթ ունեցումք շեշտելու, որ իրանական կառավարող շրջանների կողմից կիրառվող տօխմիլլացիայի քաղաքականությունը հայտնի պատճառներով հայ ժողովրդի աշխատավորական խավերի մեջ իր համար նպաստավոր հոգ չէր գտնում, և ընդհակառակը, հավատափոխության գեղքերը հաճախակի էին հատկապես հայ շահագործող՝ ունեար դասի շարքերում (կարվածատերեր, վաճառականներ, առևտրականներ և քաղաքարքնական արխոտությունի այլ ներկայացուցիչներ): 14—15-րդ դդ. պատմությունից ևս հայոնի է, որ այդ դարերում մասամբ բռնի և մասամբ է կամավոր կերպով մահմեդականություն բնուունցին հայ խոշոր ֆեոդալական տների մի շարք աշքի ընկնաղ ներկայացուցիչներ:

Այս հանգամանքը տառակել ևս գալիս էր մտահոգելու հայոց եկեղեցու դործիչներին, որովհետև այլպիսով խարխրում էին եկեղեցու ինչպես հասարակական, այնպես նաև անտեսական հիմքերը: Եվ ահա մենք տեսնում ենք, որ այս տարիների կաթողիկոս Հակոբ Զուղայեցին հանգես է գալիս տօխմիլլացիայի քաղաքականության գևմ ուղղված պայքարի գլխավոր կազմակերպչի զերում: Նա տռաջին հերթին փորձում է զանազան սկզբունքային հարցերի կապակցությամբ գերազույն Դիվան-ալ-սադարաթից ձեռք բերել հաստատուն ֆեթիւմներ և գրանք վավերացնել տալ շահական ֆերմաններով: Այդ ֆեթիւմները շարիաթական-նոտարական պատճեններով բազմացվում էին և ուղարկվում բոլոր թերթերին: Ապա նա շրջադարձ էր խոշոր հայարնակ կենտրոնները և ամենուրեք կազմակերպում վանքերի ու եկեղեցիների վերականգնման և վերանորոգման գործը: Նրա ստուցած ֆեթիւմների մեծ մասը հատկապես վերաբերում է Հայաստանի տարրեր վայրերում (Էջմիածին, Մուղնի, Խոր-Վիրապ, Մեղրի, Ագուլիս, Աստավատ և այլուր) գանձող վանքերի վերանորոգման իրավունքներին, որովհետեւ ամեն անգամ երր հայերը ձեռնարկում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման, տեղական շարիաթական օրդանների կողմից արգելքներ էին հարուցվում և հարկ էր լինում այդ մասին առանձին ֆեթվայով թուլավություն ստանալ Սովահանից²: Ինչպես դիտենք, Հակոբ Զուղայեցին իրեն հատուկ եռանդով առանձին ուշադրություն էր նվիրում նաև հայերեն գրքերի արագության կազմակերպման հարցին:

Հայոց եկեղեցու և հայ համայնքի իրավունքների այս փաստադրումը անզոր էր կանխսելու ազգային հարածանքների և կրոնական ուսուցչությունների ալիքը, որը գնալով ավելի էր մոլեգնում: Երեսնի բեգլարբեգ ընչափաղ

1 ՄՊՎ, թղթ. 1ր, վագ. №№ 132ա, 132բ, 132շ, 146:

2 ՄՊՎ, թղթ. 1ա, վագ. № 67, թղթ. 1ր, վագ. №№ 134, 136, 146 և այլն:



1669թ. հրապարակված Շահ-Առաքելյանի հրապարակն ու Դիվան-ալ-Մազարաթի ֆեթիֆան հայերից միայն իրենց բնակության վայրում շիղուա դանձելու և ավերված եկեղեցիները միայն նախկին ձեռվ և նույն շինանյութերով վերանորոգելու մասին:

Սաֆիկուլի խանը ի դեմո Հակոբ Զուղայեցու տեսնում էր մի անձնավորության, որն իր հեղինակությամբ, վայելած ժողովրդականությամբ և գործիմացությամբ կարողանում էր լուրջ հակահարված տալ հայերի նկատմամբ կիրառվող ասխմիլլացիայի քաղաքականությանը և պայքարել նրա կողմից արտահայտվող հարստահարման փորձերի դեմ։ Ուստի, երբ կաթողիկոսը 1672 թվականին, արգեն հուստահատված ստեղծված ծանր պայմաններից, փորձեց անձամբ գնալ Սպահան շահի հետ հանդիպելու, Սաֆիկուլի խանը արգելք հանդիպացավ և ճամփից ետ վերադարձելով արգելափակեց նրան Երևանի Անանիա տառքյալի վանքում։

Մեր կարծիքով, 1672—73 թվականներին է վերաբերում նաև Հակոբ Զուղայեցու նամակը ուղղված ոռւսաց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, երբ նա խանի հրամանով բանտարկված լինելով, չկարողանալով գնալ Սպահան և չունենալով օգնության ոչ մի հույս, հավանաբար իրեն շրջապատող հայ գործիչների խորհրդով նպատակահարմար է գտել դիմել Ռուսաստանի կայսրին, որպես քրիստոնյա պետության վեհապետի և խնդրել նրա միջամտությունը հայերի նկատմամբ Սևֆյան Իրանի վարած քաղաքականության հարցում։

«Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա՝ պարսից պաշտոնյաների կողմից արվում են ահա օտարութի հարկեր, — գրում է նա իր նամակում, — և մեզ, որ չենք կարողանում մեր շքավորության և ազգատության շնորհից հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանտ (ընդդումը մերն է — Հ. Փ.), չարչարում են, տանջում և վերջապես, որ հետինն ու դլխավորն (է) մահմեղականների նպատակների՝ իրենց դավանանքն են հարկադրում ընդունել։ Եթե այդչափ հալածանքները զրկեն մեզ միայն հարստությունից և աշխարհային ստացվածքներից, չարիքը փոքր կլիներ, և ես լուսթյան կտայի այդ բայց երբ տեսնում եմ, որ օր օրի վրա մեր ի Քրիստոս որն գող զավակները հեռացած (մայրական) ստինքից, խարված պատանիները նախով հեռանալիս, չափանառներին ու գիտակցության եկածներին ուժով մզված դեպի հավիտենական փրկության հակառակ զավանանքը, — չկարողանալով տանել այդքան մեծ կորուսար, ահա, արցունքներ թափելով առ Աստված՝ նրա պատկերի առաջ, մոտենում եմ նաև յուր թագավորության մեջ նրա տեղապահ Կայսեր, Զերդ Մեծությանը, որպեսզի բարեհան օգնել մեզ, խեղճությունից ճնշվածներիս, և երբ նորին ամենազոր Մեծությունը պարսիկների մոտ գեսապաններ ուղարկելու լինի մի քանի խոսք (ասել) ի պաշտպանություն մեր ստացվածքի... յուր թագավորական գիվանագետներին հրամայե ազգել։ Ռուս իշխանությունը մեծ նշանակություն ունի պարսիկների աչքում և գուցե առաջիկայում հավակնություն։ չունենան այնքան տանջել նրանց, որ ի Քրիստոս-Աստվածն ունեցած ընդհանուր հավատի շնորհիվ, կարող կլինեն Զեզ ուղղել իրենց հայացքը»¹։

Նամակի մեջ բերված հատվածից պարզուն երեսում է, որ այդ ժամանակ Հակոբ Զուղայեցին դեռևս համատում էր, որ հալածանքներն ու հարստահարության գեղքերը «պարսից պաշտոնյաների» անձնական հախածեանության հետեանք են և որ եթե ոռւսաց ցարը իր գեսապահ-

¹ Ա., Հովհաննեսյան, «Հակոբ Զուղայեցու մի գրությունը ուսու արքունիքին», Արարատ, 1915 թ., էջ 780—81. Հմմտ. Արմաно-ռուսские отношения в XVII веке, լատիներեն բնագիր՝ էջ 98, ուսու. Թարգմ., էջ 257.

ների միջոցով հանդես գտ հայերի պաշտպանությամբ, ապա շահը կարող է սաստել նրանց և թույլ չտալ, որպեսզի ճնշեն հայերին: Նամակի բովանդակությունից միաժամանակ երեսում է, որ նրա հեղինակին (ավելի ճիշտ՝ հեղինակներին) հուզող հիմնական հարցը ժողովրդին սպառնացող ասիմիլացիայի և ձուլման վտանգն էր, կամ ինչպես ասված է նամակում, «մեծ կորսոյան» վտանգը: Եվ իրոք, հայ աշխատավոր ժողովուրդը կարողանում էր նյութական ծանր զօհողությունների գնով հատուցել օրինական բոլոր հարկերն ու տուրքերը և այդպիսով պահպանել իր ազգային տրագիցիաները: Մինչդեռ, ինչպես մենք տեսանք, միայն արտակարգ օրենսդրական միջոցառումների, տնտեսական ազգային ճնշումների, կամ ինչպես ընդունված էր ասել, «շլեշաղի» (شلشلي) միջոցով էր, որ իրանական ասիմիլացառները փորձում էին կյանքում իրադարձել հայերի բոնի ասիմիլացիայի քաղաքականությունը:

Փաստեր կան ենթագրելու, որ այս գիմումը անհետեանք չի մնացել, որովհետեւ, երբ 1674 թվականին Հակոբ Զուզայեցաւն հաջողվում է զարդարողի փախչել զեղի Սպահան, Սաֆիկուլի խանը մի ընդարձակ ամրապնագիր է ուղարկում շահ Սուլեյմանին, զրագարտելով կաթողիկոսին: Խանի այս նամակը ստացվում է նախքան Հակոբ կաթողիկոսի Սպահան հասնելը: Սակայն շահը այդ գրությունը գեռ լրիվ չընթերցած, տեղն ու տեղը պատռում է այն, այրում իր մոտ գրված կրակարանի վրա և զայրացած գոչում: «Սաֆի Ղուլի խանն քակէ զերկիերն, և ինքն զիւր վնասն զնէ ի զերայ սկագիսոց¹: Պետք է ենթագրել, որ շահը, նրա հետ միասին նաև էթեմագ ուղղովվեն, արդեն ենթարկվել էին որոշ հարցապնդման Մոսկովյան գետպանների կողմից: Մասամբ գրանով պետք է բացատրել և այն, որ Հակոբ կաթողիկոսը շատ սիրալիր ընդունելություն է գտնում արքունիքում և մեկ տարի հետո, 1675 թվականին նոր խանի² Թավրիզի Ռուստամ խանի որդի Սաֆիկուլի խանի հետ զերազանում է Երևան, իսկ նախկին Սաֆիկուլի խանը ձերբակարվում է և զրկվում իր ամրող կարողությունից:

Սակայն ֆեոդալական այնպիսի մի երկրում, ինչպիսին Անդրբյան իրանն էր, որտեղ յուրաքանչյուր խան ինքն իրեն համարում էր տվյալ նահանգի լիիրավ տերն ու տնօրինը, որի առանձին նահանգներում կենտրոնական իշխանության սավերն անդամ չէր երեսում, նման արտաքին դիվանագիտական միջամտությունները չէին կարող որեւէ ազգեցություն գործել և կանխել այն բոլոր չարիքները, որոնք բխում էին պետական-հասարակական ամրող սիստեմից:

Այս երկրորդ Սաֆիկուլի խանը ոչ միայն վերջ չավեց կրոնական հայածանքներին, այլ նորաննար արգելքներով գերազանցեց իր նախորդին: Նա ձեռնարկեց մի շարք ուժեղ ոնզերսիաների՝ ուղղված Երևանի բեգլարեկության մեջ բնակված հայ ազգարնակչության զեմ: Այս խարական և անհանդուրժողական քաղաքականությանը Երևանի աղբբեջանական համայնքը պատասխանեց միահամուռ ապստամբությամբ, որը հայ-աղբբեջանական դարավոր քարեկամության և եղբայրության պայծառ էջերից մեկն է կազմում:

¹ Զաքարիա Սարկավագ, հատոր 2, էջ 80:

«...և արարին խորհուրդ, — գրում է Զաքարիա Սարկավագը, — և եղին դլիսաւոր ինքեանց զումն ֆաթալի անուն, և անուանեցին զինքեանց Դարափաշայ: Եւ խորհեցան զկորուստ խանին՝ ասելով սա... ասէ, յաւուրս անձրեի քրիստոնեայք մի ելցեն արտաքս. մեք ահա գրացի եմք քրիստոնէից և խառն ի խուռն կամք ընդ նոսա. առետուր ի միասին լինի, և շահս բազումս ունիմք ի նոցանէ և սա կամի զրկել զմեղ ի շահից մերոց: Եւ զի, ասէ, յազօթարանս քրիստոնէից մուսրման մի մացէ. արդ զամենայն ցաւագարս մեր եկեղեցիքն բժշկեն. այլ և տեղի զրօսանաց մերոց եկեղեցիքն են. զմեռնալո թարց հրամանաց իմոց ասէ՝ ոչ թաղել, ապա ուրեմն հարկս կամի առնուր ի մեռելոց: Եւ զգողս ոչ պատճէ, այլ առնու տուգանս՝ և թողու. և նոքա դարձեալ առնեն դողութիւն: Զայս և այլ բազում չարիս նորա դրեցին և ձեռամբ թագաւորական ծառայի առաքեցին առ շահն և ինքեանք յարեան ի վերայ խանին և մուծին ի տուն, և ոչ թողին երանել արտաքս: Այլ և կնքեցին զամենայն դրունս ամբարացն և չափով տային զեկրակուր նորա: Եւ այսպէս տառապանօք պահեցին զնա մինչեւ եկն այլ խան և զնա հալածեցին և եկեալ դնաց յԱսպահան և երկիրս մնաց խաղող¹:

Հակոբ Զուզայեցու և իր գործակիցների հայ վաճառականության ու մելիքների համար ավելի քան սպարզ էր գառնում, որ փրկության միակ միջոցը երկրի շուտափույթ աղատագրումն էր պարսկական լծից: Նույն օրերին, երբ Երեանում տեղի էին ունենում վերը նկարագրված դեպքերը, եջմիածնում գումարվում էր գաղտնի ժողով, ուր քննարկվում էր երկրի աղատագրման հարցը:

Ինչպես գիտենք, աղատագրական՝ այս ձեռնարկը սկիզբն էր շուրջ 150-ամյա այն ներսական պայքարի, որ մղեց հայ ժողովուրդը, և որը ի վերջո, շնորհիվ ոռոսական պետության ու ժողովրդի օգնության, հայ ժողովրդի Արևելյան հատվածի համար պատկինց հաջողությումը:

Պատմական Հայաստանի մի զգալի մասը կարողացավ թոթափել իրանական ասիմիլյատորների ծանր լուծը և մտավ զարդացման ավելի բարձր տարիների վրա դանվող ոռոսական պետության հովտնու տակ:

¹ Զաքարիա Սարկավագ, Համար 2, էջ 90:

